

**«Ս. Ղազար» շքանշանի տուչութիւն Գերշ. Տ.
Տաթեւ Արք. Ղարիպեանին**

Պրազիլի մէջ գործող «Երուսաղէմի Ս. Ղազարի Ասպէնշական եւ Զինուորական Բարձրագոյն Կարգի» բարձր ղեկավարութիւնը (Grand Prieuré du Brasil de l'Ordre Militaire et Hospitalier de Saint Lazare de Jérusalem), զնահատելով թեմիս Առաջնորդ Սրբազնին, Գերշ. Տ. Տաթեւ Արք. Ղարիպեանի ծառայութիւնը Հայց. Առաք. Եկեղեցւոյ Պրազիլիոյ թեմին, քոյլ Եկեղեցիներու հետ համագործակցութեան, միջ-Եկեղեցական եւ միջ-Համայնքային աշխատանքներուն, ծրագրեց սոյն շքանշանով պատուել եւ արժանացնել սոյն «Կարգի» Բարձրագոյն Պատուին։

Այս առիթով Նոյեմբերի 23-ին, Ս. Գէորգ Մայր Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ յատուկ Հանդիսաւոր արարողութիւնը, Հանդիսաւոր մուտքով՝ սոյն կազմակերպութեան գլխաւոր ներկայացուցիչներուն, որոնք ընթացք տուին յայտագրին, Պրազիլի եւ Հայաստանի քայլերգներու կատարումով։ Ապա ընթերցուեցաւ վկայագիրը եւ հրամանագիրը, որ եկած էր Ֆրանսայի բարձրագոյն Մեծաւորչն՝ Նորին Գերազանցութիւն Ֆրանսուա տէօ Գասուէ Ժդ Դուքս Պրիսսագի, որ յատուկ Հրամանգրով եւ վկայագրով «Եկեղեցական Ասպէտ»ի կոչումով կը պատուիր Գերշ. Տ. Տաթեւ Արք. Ղարիպեանը Շքանշանի տուչութիւնը կատարեց Պրազիլի «Բարձր Աստիճանաւոր» Փրոֆ. Տօքթ. Ռայմունտո Գէնժը, որ խօսք առնելով ըստաւ. «Այս շքանշանով ուղեցինք պատուել Պրազիլի մէջ առաջին Հայը», որ իր աշխատանքով, բարեկամական սիրայիր յարարերութիւննորով եւ ազնիւ նկարագրով, արժանի դարձաւ այս բարձր կոչումին. ուրախ ենք որ յետ այսու

մեր եղրայրութեան մէջ զինք եւս ունինք: «Ս. Ղազարի այս «Կարգը» հիմնուած է Երուսաղէմի մէջ, ուր մէծ ներդրում ունեցած էն Հայոց Վանքի միարան վարդապետները, իրենց գործնական մասնակցութեամբը: Տաթեւ Սրբազնը, իրենց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Միարան, իր պարզեւատրութեամբ, այսօր կ'ողեկոյէ պատմական այդ իրողութիւնը»:

Սրբազնը, զգացուած իրեն եղած այս պատիւէն, ըրաւ իր չնորհակալական խօսքը, ընդգծելով որ, այս պարզեւատրութիւնը իր անձին միջոցով կը պատկանի ընդհանրապէս Պրազիլահայ թեմին եւ Համայնքին: Այս առիթի Եկեղեցի եկած էին բազմաթիւ հիւրեր, Եկեղեցականներ, զաղութիս կազմակերպութեանց ներկայացուցիչներ, որոնք մի առ մի չնորհաւորեցին Սրբազնը, յայտնելով իրենց խնդակցութիւնը:

Ժամը 13.30-ին, քաղաքիս լքեղ սրահներէն մէկուն մէջ, Հրաւիրեալներ մասնակցեցան այս առիթով կազմակերպուած ճաշկերոյթին, ուր եղան ինքնարուի արտայայտութիւններ Սրբազն Հայրը, անգամ մը եւս իր չնորհակալութիւնը յայտնեց նախ «Սուրբ Ղազար» ղեկավարութեան, ապա բոլոր ներկաներուն, որոնք բարեկամարար եկած էին, միասնարար վայելելու օրուայ ուրախութիւնը, որ Հոգեկան բաւարարութեամբ կը լեցնէր բոլորը:

Այս բարեկամատիկ առիթով, զանազան անձնաւորութիւններէ եւ Հաստատութիւններէ Հասած էին չնորհաւորական գիւրեր, Պուէնոս Այրիսէն, Գորտոպայէն եւ Սան Փաւլոյէն:

ՄԻՓԱՆ